ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/11

ք. Երևան «_____» հունվարի 2025թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս՝ գլխավոր քարտուղար Էդգար Հովսեփյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ին, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Վահագն Մխիթարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «**www.e-civil.am**», «**www.e-apostille.am**», «**www.e-verify.am**» **և** «**www.ehealth.am**» **էլեկտրոնային համակարգերի սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10/տաս/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **81600000** (ութսունմեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, Պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 03.01.2025թ.-ին փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Ընդ որում մինչև պայմանագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու

ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264

HOVSEPYAN EDGAR 3808920963

Подписано цифровой подписью: HOVSEPYAN EDGAR 3808920963
DN: c=AM, sn=•••••••••, givenName=•••••, serialNumber=64f4f8450e68, cn=HOVSEPYAN EDGAR 3808920963
Дата: 2025.01.29 10:43:05 +04'00'

______________ Է. Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951
Հեռ. /010/585-980

Digitally signed by MKHITARYAN VAHAGN 3505730378
Date: 2025.01.27 14:12:22 +04'00'

______________ Վ. Մխիթարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« » հունվարի 2025թ. կնքված
“ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/11» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	քանակը	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	Մատուցման	
						ժամկետ	հասցե
1	**72511700/2**	համակարգչային տեխնիկայի կառավարման ծառայություններ համակարգչային համակարգերի սպասարկման համար/«**www.e-civil.am**», «**www.e-apostille.am**», «**www.e-verify.am**» **և** «**www.ehealth.am**» էլեկտրոնային համակարգերի սպասարկման ծառայություններ	դրամ	1	**81600000**	մինչև 2025թ. դեկտեմբերի 25	ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
տեխնիկական բնութագիրը							

www.e-civil.am, www.e-apostille.am, www.e-verify.am և www.ehealth.am էլեկտրոնային համակարգերի սպասարկման և թվայնացման ծառայությունների տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական բնութագիր

Սույն տեխնիկական առաջադրանքը վերաբերում է ՀՀ ԱՆ ՔԿԱԳ էլեկտրոնային ռեգիստրի համակարգի, ՀՀ ԱՆ ապոստիլի միասնական էլեկտրոնային գրանցամատյանի համակարգի, ՀՀ պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի, ՀՀ ԱՆ ծննդյան, մահվան և պերինատալ մահվան բժշկական վկայականների միասնական ռեգիստրի տեղեկատվական-որոնողական ավտոմատացված համակարգերի ծրագրային, թվայնացման, տեխնիկական և խորհրդատվական սպասարկման ծառայությունների մատուցմանը:

1. Փաստաթղթի մասին

Փաստաթղթում նկարագրված են վերոնշյալ համակարգերի գործառույթների ամփոփ նկարագրությունը, սպասարկման ծառայությունների ընթացակարգը և այլ մարմինների հետ տվյալների փոխանակման կարիքները: Նկարագրված են տեխնիկական խնդիրների լուծման և ծրագրային մշակումների ներդրման կարգը:

2. Ներածություն

2.1. ՔԿԱԳ ռեգիստրի էլեկտրոնային համակարգը կատարում է հետևյալ հիմնական գործառույթները՝

ՀՀ Արդարադատության նախարարության Քաղաքացիների Կացության Ակտերի Գրանցման գործակալության «Տեղեկատվական-որոնողական ավտոմատացված համակարգ»- ը ծառայում է ՔԿԱԳ կողմից օրենքով նախատեսված գործառույթների իրականացմանը: Համակարգի ներդրումը սկսվել է 2014 թ. սեպտեմբերից եւ ներկա պահին այն իր մեջ ներառում է հետեւյալ ռեգիստրները, ենթահամակարգերը եւ տվյալների փոխանակման մոդուլները՝

- ՔԿԱԳ Էլեկտրոնային ռեգիստր
- Տվյալների փոխանակման մոդուլ
- Հյուպատոսական համակարգի հետ գրանցումների իրականացման մոդուլ,

2.2. ՔԿԱԳ Էլեկտրոնային ռեգիստր

Հիմնական գործառույթներ՝

- Ծննդյան, որդեգրման, անվանափոխության, ամուսնալուծության, ամուսնության, հայրության ճանաչման ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում եւ գրանցում
- Ակտային գրանցումների մասին հաշվետվությունների ներկայացում
- ծննդյան ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում, գրանցում, դրանցում փոփոխությունների և լրացումների իրականացում:
- որդեգրման ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում, գրանցում, դրանցում փոփոխությունների և լրացում-ների իրականացում
- անվանափոխության ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում, գրանցում, դրանցում փոփոխությունների և լրացումների իրականացում:
- ամուսնալուծության ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում, գրանցում, դրանցում փոփոխությունների և լրացումների իրականացում:
- ամուսնության ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում, գրանցում, դրանցում փոփոխությունների և լրա-ցումների իրականացում:
- հայրության ճանաչման ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում, գրանցում, դրանցում փոփոխությունների և լրացումների իրականացում:
- մահվան ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում, գրանցում, դրանցում փոփոխությունների և լրացումների իրականացում,
- Շաբաթական հաճախականությամբ ակտային գրանցումների գրքերի տեղափոխում թվայնացնողի տարածք,
- Շաբաթական հաճախականությամբ ակտային գրանցումների թվայնացված գրքերի տեղափոխում ՀՀ ԱՆ ՔԿԱԳ հանրապետական արխիվ,
- Ակտային գրանցման թղթային բնօրինակների սկանավորում,
- ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգում թվայնացված ակտային գրանցման սկանավորված տարբերակի կցում էլեկտրոնային գրառմանը,
- Էլեկտրոնային սկանավորված ակտային գրանցման տվյալների մուտքագրում էլեկտրոնային գրառման համապատասխան դաշտերում,
- Մուտքագրված տվյալների համադրում ՀՀ Ոստիկանության ԱՎՎ բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանի հետ,
- Ամսական թվայնացման ծավալների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում առնվազն 25000 ակտային գրանցման թվայնացման վերաբերյալ

Բոլոր կատարված գրանցումների վավերացում ներքոնշյալ համակարգերի հետ փոխգործելիության միջոցով՝

- ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի հետ – ծննդյան, մահվան և անվանափոխության դեպքերում տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով առաքվում է ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստր,
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ – համակարգն ինտեգրված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովությանն պետական ծառայության տեղեկլատվական համակարգի հետ և ապահովում է

- Ակտային գրանցումների մասին հաշվետվությունների ներկայացում

2.2.1. Տվյալների փոխանակման մոդուլ

Հիմնական գործառույթները՝

- ՀՀ քաղաքացիների անձնագրային տվյալների բեռնում,
- Գործող ԻԱ մասին հաշվետվությունների ներկայացում,
- Պետական այլ շահագրգիռ գերատեսչություններին ԻԱ մասին տվյալների տրամադրում,
- Տվյալների փոխանակման ապահովում ՀՀ ԿԱ ՊԵԿ տվյալների շտեմարանի հետ ԻԱ պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում,
- ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության կողմից արգելանքների էլեկտրոնային եղանակով սահմանման մոդուլ,

2.3. ՀՀ ԱՆ ապոստիլի միասնական էլեկտրոնային գրանցամատյանի համակարգ www.e-apostille.am

ՀՀ ԱՆ ապոստիլի միասնական էլեկտրոնային գրանցամատյանի համակարգն ապահովում է քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերի ապոստիլով վավերացումը: Համակարգն իրենից ներկայացնում է ապոստիլով վավերացում իրականացում պաշտոնատար անձանց ռեեստր, որտեղ ամփոփված են բոլոր տվյալ պաշտոնատար անձանց կնիքների և ստորագրությունների նմուշները: Համակարգն ինտեգրված է ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի էլեկտրոնային ստորագրության ենթակառուցվածքի և ՀՀ պետական մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական www.e-verify.am հարթակին:

2.3.1. Տվյալների փոխանակման մոդուլ

Հիմնական գործառույթները՝

- ՀՀ քաղաքացիների անձնագրային տվյալների բեռնում,
- Էլեկտրոնային համակարգերում ապոստիլի պատրաստում
- ԻԱ պետական միասնական ռեգիստրի գործակալության
- Տվյալների փոխանակման ապահովում ՀՀ ԿԱ ՊԵԿ տվյալների շտեմարանի հետ ԻԱ պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում,
- ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության կողմից արգելանքների էլեկտրոնային եղանակով սահմանման մոդուլ,

2.4. ՀՀ պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգ www.e-verify.am,

ՀՀ պետական մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական www.e-verify.am կայքը հնարավորություն է ընձեռում ստուգել պետական մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերի վավերականությունը: Պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման համար անհրաժեշտ է մուտքագրել փաստաթղթի վրա առկա 16 նիշանոց ծածկագիրը կայքի համապատասխան դաշտերում:Համակարգն ինտեգրված է ՀՀ

ԱՆ ՔԿԱԳ e-civil էլեկտրոնային համակարգին, ՀՀ ԱԳՆ Հյուպատոսական համակարգերին և ՀՀ ԱՆ ծննդյան, մահվան և պերինատալ մահվան բժշկական վկայական-ների միասնական ռեգիստրի համակարգին ու ապահովում է այդ համակարգերով տրամադրված էլեկտրոնային փաստաթղթերի վավերականության ստուգումը:

2.4.1. Տվյալների փոխանակման մոդուլ

Հիմնական գործառույթներ՝

- Մուտքագրված 16 նիշանոց համարով փաստաթղթի վավերականության ստուգում ՀՀ ԱՆ ՔԿԱԳ, ՀՀ ԱԳՆ Հյուպատոսական և ՀՀ ԱՆ ծննդյան, մահվան և պերինատալ մահվան բժշկական վկայականների էլեկտրոնային համակարգերում:

2.5. ՀՀ ԱՆ ծննդյան, մահվան և պերինատալ մահվան բժշկական վկայականների միասնական ռեգիստրի համակարգ www.ehealth.am

ՀՀ ԱՆ ծննդյան, մահվան և պերինատալ մահվան բժշկական վկայականների միասնական ռեգիստրի համակարգ www.ehealth.am-ն ապահովում է ավելի քան 350 բժշկական հաստատություններում ծննդյան և մահվան տեղեկանքների էլեկտրոնային եղանակով տրամադրումը: Համակարգն ինտեգրված է ՀՀ պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգ www.e-verify.am-ին, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրին և ՀՀ ԱՆ ՔԿԱԳ e-civil համակարգին:

2.5.1. Տվյալների փոխանակման մոդուլ

Հիմնական գործառույթներ՝

- ՀՀ քաղաքացիների անձնագրային տվյալների բեռնում,
- ՀՀ քաղաքացիների ամուսնության ակտային գրանցումների տվյալների բեռնում ՔԿԱԳ համակարգից,
- Տվյալների փոխանակում բնակչության պետական ռեգիստրի և ՔԿԱԳ համակարգերի հետ գրանցված տվյալների փոխանակման նպատակով:

3. Վերոնշյալ համակարգերի և ռեգիստրների ծրագրային և տեխնիկական սպասարկումը ներառում է հետևյալ ծառայություններ՝

1. Շահագործման ընթացքում առաջացող տեխնիկական և ծրագրային խնդիրների շտկում, որոնք առաջացել են ծրագրային ապահովման կամ մարդկային սխալի հետևանքով:
2. ՀՀ օրենսդրության փոփոխման արդյունքում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների իրականացում:
3. ՏՀ անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների (Linux, MySQL, PHP, Apache) թարմացումների տեղադրում:
4. Այլ մարմինների հետ տվյալների փոխանակման և ներկայացման ընթացքում առաջացող խնդիրների լուծման աջակցություն:
5. ԱՆ կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների պատրաստում:
6. ԱՆ կողմից տրամադրված համակարգում տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում առկա տվյալների շրջանակում:
7. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում:
8. ԱՆ պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում:
9. ԱՆ կողմից համապատասխան ստորաբաժանման ներկայացմամբ բոլոր խնդիրների արձանագրում և տեխնիկական նկարագրության պատրաստում, համակարգերի նոր տարբերակների ստեղծման աշխատանքներում ներգրավվելու նպատակով:
10. Օգտվողների աջակցություն 350 բուժհաստատության, 50 ՔԿԱԳ տարածքային ստորաբաժանման համար:
11. Օգտվողների սպասարկում բազմագիծ հեռախոսագծով սպասարկման կենտրոնով աշխատանքային օրերին և ժամերին (5/8):

12. Համակարգերի ընթացիկ բոլոր թարմացումների և նորացումների անվճար տեղադրում, բացառությամբ ամբողջովին նոր համակարգի ստեղծման դեպքում:
13. Պատվիրատուի պահանջով կատարել սերվերների օպերացիոն համակարգերի տեղադրում, համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր:
14. Կատարել սերվերների ծրագրային ապահովման, օպերացիոն համակարգերի թարմացում ծրագրային ապահովման աշխատանքն ապահովող բոլոր սերվերների համար:
15. Պատվիրատուի կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում:
16. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում:
17. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված պայմաններով համակարգերում ընթացակարգերի ավտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում:
18. Պատվիրատուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականացման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում:
19. Պատվիրատուի պահանջով համակարգում առաջացած խոտանված տվյալների մշակում:
20. Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից:
21. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացում:
22. Շաբաթական հաճախականությամբ ակտային գրանցումների գրքերի տեղափոխում թվայնացնողի տարածք,
23. Շաբաթական հաճախականությամբ ակտային գրանցումների թվայնացված գրքերի տեղափոխում ՀՀ ԱՆ ՔԿԱԳ հանրապետական արխիվ,
24. Ակտային գրանցման թղթային բնօրինակների սկանավորում, որի մեջ մտնում են՝ ծննդի, մահվան, ամուսնության, ամուսնալուծության, անվան փոխման, հայրության որոշման և որդեգրման պետական ակտային գրանցումների տեսակները, և
    ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգում թվայնացված ակտային գրանցման սկանավորված տարբերակի կցում էլեկտրոնային գրառմանը՝ թվով **300000 հատ**: Ընդ որում՝ թվայնացված ակտային գրանցումների քանակի հաշվարկման ժամանակ ծննդի և/կամ որդեգրման ակտային գրանցումների առկայության դեպքում դրանց քանակը բազմապատկվում է 1.2/մեկ ամբողջ երկու տասնորդական/ գործակցով և դրանց դիմաց վճարումն իրականացվում է այդ գործակցով բազմապատկումից հետո ստացված քանակի հաշվարկով: Յուրաքանչյուր ակտային գրանցման թվայնացման գնման գինն է՝ 80 /ութսուն/ ՀՀ դրամ: Ակտերի թվայնացման ծառայությունների մատուցման սկիզբը համարվում է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը:
25. Էլեկտրոնային սկանավորված ակտային գրանցման տվյալների մուտքագրում էլեկտրոնային գրառման համապատասխան դաշտերում,
26. Մուտքագրված տվյալների համադրում ՀՀ Ոստիկանության ԱՎՎ բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանի հետ,
27. Ամսական թվայնացման ծավալների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում առնվազն 25000 ակտային գրանցման թվայնացման վերաբերյալ:
28. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում:
29. Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների ծրագրային փոփոխությունների և լրացումների իրականացում:

Այլ պահանջներ:

Հեռախոսային կենտրոն, առնվազն վեց միաժամանակյա մուտքով:

1. Թվայնացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ, համակարգիչների, սկաներների, ակտային գրանցումների գրքերի անվտանգ պահպանման համար մուտքի ելքի վերահսկվող տարածքի առկայության վերաբերյալ հավաստում,

2. Էլեկտրոնային ռեգիստրի կամ համապետական տեղեկատվական համակարգի թվայնացման առնվազն մեկ պայմանագրի առկայություն,
3. SS ոլորտում գործունեության առնվազն հինգ տարվա փորձ,
4. Տեղեկատվական անվտանգության կառավարման ISO / IEC 27001 ստանդարտի համապատասխանելիության հավաստագիր ծրագրային ապահովման մշակման և սպասարկման ոլորտներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264

HOVSEPYAN EDGAR 3808920963

Էդ. Հովսեփյան
/ստորագրություն/

Подписано цифровой подписью: HOVSEPYAN EDGAR 3808920963
DN: c=AM, sn=•••••, givenName=•••••, serialNumber=64f4f8450e68, cn=HOVSEPYAN EDGAR 3808920963
Дата: 2025.01.29 10:45:03 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951
Հեռ. /010/585-980

Digitally signed by MKHITARYAN VAHAGN 3505730378
Date: 2025.01.27 14:13:24 +04'00'

Վ. Մխիթարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » հունվարի 2025թ. կնքված
“ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/11» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**72511700/2**	համակարգչային տեխնիկայի կառավարման ծառայություններ համակարգչային համակարգերի սպասարկման համար		6800000	13600000	20400000	27200000	34000000	40800000	47600000	54400000	61200000	68000000	81600000	81600000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264

HOVSEPYAN EDGAR 3808920963

Էդգար Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

Подписано цифровой подписью: HOVSEPYAN EDGAR 3808920963
DN: c=AM, sn=•••••, givenName=•••••, serialNumber=64f4f8450e68, cn=HOVSEPYAN EDGAR 3808920963
Дата: 2025.01.29 10:45:27 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951
Հեռ. /010/585-980

Digitally signed by MKHITARYAN VAHAGN 3505730378
Date: 2025.01.27 14:13:54 +04'00'

Վ. Մխիթարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » հունվարի 2025թ. կնքված
“ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/11» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » հունվարի 2025թ. կնքված
“ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/11» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն